



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԹԵՄԻՍ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Կ՛ՈՂՋՈՒՆԷ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ ՔՈՒԵԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՆՔԸ

Չորեքշաբթի, 20 Յուլիսին, Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան Արտաքին յարաբերութեանց յանձնախումբը, մէկի դէմ 43 քուէով, որդեգրեց բանաձեւ մը, որ Թուրքիայէն կը պահանջէ քրիստոնէայ համայնքներուն վերադարձնել անոնցմէ խլուած եկեղեցիները եւ վերջ տայ քրիստոնէայ փոքրամասնութեանց դէմ ճնշումի իր վարմունքին:

Շաբաթասկիզբին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեան կոչեր ուղղած էին ամերիկահայութեան, որպէսզի Ներկայացուցիչներու հետ հաղորդակցութիւններ հաստատելով, պահանջէին այս բանաձեւին որդեգրումը: Հայ Դատի գրասենեակէն արձակուած կոչին ընդառաջող այս արշաւը արդարացուց ի գործ դրուած ճիգը:

«Խորապէս ուրախ ենք քուէարկութեան արդիւնքին համար, շնորհակալութիւն՝ Ներկայացուցիչներու տան Արտաքին յարաբերութեան յանձնախումբի անդամներուն: Կը յուսանք, որ Ներկայացուցիչներու Տունը եւս որդեգրէ որոշումը. կ'աղօթենք, որ շուտով հասնի այն օրը, երբ Թուրքիոյ տարածքին մեր դարաւոր եկեղեցիներու սրբապղծումը, կործանումը վերջ գտնեն եւ քրիստոնէայ փոքրամասնութեանց դէմ հալածանքները դադրին», յայտարարեց Առաջնորդ Սրբազանը, Չորեքշաբթիի քուէարկութենէն ետք: Ան նաեւ բարձր գնահատեց Հայ Դատի յանձնախումբին անդուլ ճիգերը, որոնք ի գործ կը դրուին հայութեան զաւակներուն իրաւատիրութիւն ջամբելու եւ զանոնք նման աշխատանքներու լծելու համար:

PRELATE SALUTES HOUSE FOREIGN AFFAIRS COMMITTEE VOTE CALLING ON TURKEY TO RETURN CHURCHES

On Wednesday, July 20, the House Foreign Affairs Committee by a vote of 43 to 1 adopted an amendment calling on Turkey to return stolen churches and end oppression of its Christian minorities.

Earlier in the week, Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, had called on Armenian communities throughout the United States to contact their representatives in Congress and urge them to support this amendment. The call to action, alerts by the ANCA, and phone calls by thousands of Armenian across the U.S. paid off on Wednesday with this crucial vote.

"We are overcome with joy at this bold decision by the House Foreign Affairs Committee and extend our profound thanks and gratitude to the Committee members. We are hopeful for a similar outcome on the floor of the House of Representatives, and pray for the day when the desecration and destruction of our sacred churches and heritage and the persecution of Christian minorities in Turkey is put to an end. We express thanks and appreciation also to the Armenian National Committee for their relentless efforts in educating and mobilizing the community", said the Prelate after Wednesday's vote.